ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
«ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ

14.03.2019թ.

ՀՀ Շիրակի մարզպետ

պ. Տ. Պետրոսյանին

Հարգելի մարզպետ պ. Տ. Պետրոսյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակավանի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Կից ներկայացնում ենք մրցույթի հայտարարության տեքստը, որը հրապարակված է <<Կրթություն>> շաբաթաթերթում:

Դպրոցի տնօրեն Ն.Համբարյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 4229-19
14. 03. 19

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Շիրակավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համաձայն որակավորման վերաբերյալ
3. Անձնագրի պատճենը
4. Ինքնակենսագրություն (ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **ապրիլի 3-ը** ներառյալ,ամեն օր՝ **ժամը 10 : 00-ից 15 : 00-ն**, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 8-ին՝ ժամը 15:00 –ին** Շիրակի մարզի Շիրակավանի միջնակարգ դպրոցում:
Հասցեն՝ գ. Շիրակավան, 4-րդ փողոց, շենք 31:
Տեղեկությունների համար զանգահարել (094) 932126, (094) 652400 հեռախոսահամարներին: